

6118
6119

6120

6121

2457P
24572

891.99

U-68

2011

12003

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԵՍ ԹԱՐՎԵՐԴԵԱՆԻ

891.99

Ա - 68

Ա. ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԴՈՒՐՍ
ԱԿՐ.

Վ. Հ. Պ. Խ. Կ.

Ա.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱՊՐԻԼԵԱՆ

ТИФЛИСЪ

Типографія И. Мартirosianca, Орбел. ул. д. № 1-2

1893

հողի ցուրտ գիրկը, կարծես չուզենալով բաժանուել
իրանց թանկագին մօրից, դէպի որը անհուն սէր
էին տաճում:

Ի՞նչ ուրախութիւն ունէր ծերունի Օհանը: Թը-
շուառ հայրը միայն մի մխիթարութիւն ունէր. այդ,
նրա միակ կենդանի մնացած զաւակն էր: Արմե-
նակը,—այդպէս էր որդու անունը, —քսանամեաչ
էր, առողջ կազմուածքով, սակայն ապերջանիկ հօր
վատ հսկողութեան տակ լինելով, կամակոր բնաւո-
րութիւն էր ստացել:

Ծերունի Օհանը եօթանասուն գարուն տեսած
մարդ էր. ամրակազմ և ժիր էր մինչև իր սիրելինե-
րի մահը, սակայն նրանց կորստից յետոյ սկսեց թու-
լանալ, որ աւուր մօտենալով գերեզմանին:

Երեկոյ էր: Ծերուկ Օհանը նստած էր իր պարտի-
գում, անձնատուր լինելով պէս-պէս մտածմունքնե-
րին: Նա, անտրտունջ մարդկային Արարչից, ասում
էր իր մտքում. «Թող օրհնած լինի Քո կամքը» և
ապա աչք գարձրեց դէպի բնութեան հիասքանչ տե-
սարանը, որ աչք ժամանակ բացվում էր նրա առաջ:

Նրեւ իր վերջին թոյլ ճառագայթները սփռել էր
կանաչագարդ պարտիզի վրայ, որոնցից մի քանիսը
ազատուելով ստուերախիտ խնձորենիներից և աս-
ղարթախիտ տանձենիներից, ընկել էին ծերունու
դալկացած դէմքի վրայ: Օհանը քնից նոր սթա-
ֆուածի պէս եղաւ և այս ու այն կողմը դիտելով
հառաչեց. «Երանի թէ կինս և զաւակներս փոքր
ինչ էլ վայելէին Քո տուած բարիքները, ներիք մե-

դաւորիս, սուրբ լինի Քո անունը: Երեխ կամքդ այդ-
պէս է:»

Տխուր էր հայրը, տրտում—նրա հոգին, Արմենա-
կը, նկատելով հեռուից հօր մելամաղձոտ դէմքը,
մօտեցաւ նրան և հարցրեց:
— Հայրիկ, ինչու ես հառաջում, ինչ է պատահել
քեզ: — Էհ, խորը հոգոց հանելով պատասխանեց հայրը,
ինչս մնաց ուրախանալու: Աստուած խլեց մեղանից
մօրդ ու եղբայրներիդ...

Ծերունին հագիւ արտասանեց այդ խօսքերը, որ
սկսեց երեխայի նման հեկեկալ: Անտարբեր Արմենա-
կի խիզնն էլ րոպէապէս զարթնեց, նրա աչքերում
երեացին արտասուքի կաթիներ:

Օհանը շարունակեց:
— Ես էլ ահա մօտենում եմ գերեզմանին...

— Ինչու հայրիկ, ընդհատեց Արմենակը, դու դեռ
շատ պէտք է ապրես:

— Եցն որդեակ, նորից խօսեց հայրը, եթէ մշտա-
պէս մնացիր մօտս, քո հայրենի երկրում և մտքիցդ
հանէիր քո մտադրութիւնը, ես դեռ կապրէի: Ճատ
անգամ լսել եմ քեզանից, որ թողնեմ քեզ հեռու
աշխարհ գնալու բաղդ որոնելու համար: Ես արդէն
ծերացել եմ. վաղ թէ ուշ պէտք է մեռնեմ. կաց
ալստեղ. ժառանգիր իմ քրտինքով ձեռք բերած
կալուածները. տեսնում ես, ես արդէն ուժասպառ
եմ լինում, ինքդ կառավարիր, պսակուիր, և քո
ձեռքով մի բուռն հող ածած դամբարանիս վրայ: Խո-
կական բաղդը հողի մէջն է, կոիր խրատս. մի գնաց
հացը եիքից դուրս, դէն ձգիր պանդխտութեան

կործանիչ գաւազանը և ապրիք քո գարամեալ հօր հետ:

—Յնորամիտ մտադրութիւնդ, շարունակեց Օհանը, դէպի կորուստ էտանում քեզ: Ո՞րքան թշուառներ ճաշակել են պանդխտութեան աւերիչ ներգործութիւնը, քանի քանի թշուառ պանդխտներ տըքնում են օտարութեան մէջ ծանր բեռների տակ, մատնուելով սովածութեան և քաշքայելով իրանց առողջութիւնը, նայիր մեր հարևան Ստեփանին, որ նոր է վերադարձել պանդխտութիւնից. ով կը մտածէ թէ նա երեսնամեայ կայտառ երիտասարդ է. նա դեռ չբացուած արդէն թառամել է. այնպէս հալ ու մաշ է եղել, որ միայն ոսկորներ է մնացել, ցիշիր Սաքօին, որ ծանր բեռի տակ ընկնելով, մեռնում է օտարութեան մէջ, հեռու սրտացաւ բարեկամներից: Եթէ չես լիլի ինձ, վերջը կփօշմանես, բաց ես այնու ամենայնիւ տալիս եմ իմ հայրական օրհնութիւնը:

—Թող Աստուած օրհնի քո սերունդը, ասեց ծերունին, թող աճի ու զօրանայ հայր Աբրահամի որդոց նման. չպակասին քեզ իմ քրտնավաստակ կալուածները, այլ աւելանան: Այժմ դու գիտես:

Որդին կարծես չէր լսում հօր խօսքերը, որոնք մեզմ քամիների նման դիսլում էին նրա ականջներին և ցետ մղվում:

Արմենակի ներսը մի տեսակ հոգեկան ալէկոծութիւն էր տիրում. գնալ թէ զգնալ, ահա այն խօսքեր, որոնք անդադար տակնու վրայ էին լինում նրա ուղեղում: Դէպի իր թշուառ և գթառատ ծնողը արդիւնաբերութիւն: Առաջին անգամ արդարացրեց հօր լոյսերը, գեղեցիկ կատարելով նրա պատուէրները, երկրորդ անգամ նոյնպէս, սակայն մի դէպք, մի անակլնկալ կայծ բորբոքեց նըրան և կապեց քաղաքի հետ:

ձանքին, որ մղում էր նրա դէպի բաղդը...
—Ո՞չ, ասաց պանդխտութեան ծարաւով բռնուած Արմենակը վճռական կերպով, գնալ, թէկուզ ամբողջ գիւղ ինձանից զոհ պահանջուէր, ես անշուշտ պէտք է գնամ:

Բ.

միջնորդ ով լումբ և ըստ զանազան գործութիւններու առաջին միջնորդ է Աբրահամ Աստուած Սատանա առաջին մասն ու ուստի վ զանազան գործութիւններու առաջին միջնորդ է Արմենակը թէ տնացին և թէ գրաի աշխատանքի հետ վաղուց մասնակցութիւն ունէր, որին շատ օգնում էր հօր անդուլ աշխատութեան կենդանի օրինակը: Արմենակը երկու անգամ եղել է Վ. քաղաքում գնելու իրանց հարկաւոր պիտոցները կամ արտահանելու անասուններ և գիւղական-տնացին արդիւնաբերութիւն: Առաջին անգամ արդարացրեց հօր լոյսերը, գեղեցիկ կատարելով նրա պատուէրները, երկրորդ անգամ նոյնպէս, սակայն մի դէպք, մի անակլնկալ կայծ բորբոքեց նըրան և կապեց քաղաքի հետ:

Աշնանացին հողմաշունչ օրերից մէկն էր, երբ Արմենակը երկրորդ անգամ հասել էր Վ. քաղաքը:

մութը արդէն պատել էր, այդ պատճառով և նա
գիշերեց այնտեղ: Յատ է տալիք բարս բարս
Վաղ առաւօտեան, երբ արել նոր էր բարձրա-
նում հորիզոնից, իր ոսկէժպիտ ճառագայթները ցը-
րուելով այս և այն կողմը, Արմենակը գլուխը բարձ-
րացրեց, դարձաւ դէպի արելքը ու երեսը խաչ հա-
նեց և գնաց իր գործին:

Նրա բերած բոլոր ապրանքները՝ թէ անասուններ
և թէ ուրիշ զանազան մթերքներ ի տես էր հանել
քաղաքի շուկայում:

Յաճախորդների թւում աչքի էր ընկնում Վ. քա-
ղաքացի առաջին կարգի վաճառական՝ Սահակ Աե-
ւոնեան, որը սովորութիւն ունէր առաւօտները ա-
մենից վաղ զարթնել: Այդ առաւօտը նա ըստ իւր
սովորութեան ամենից առաջ շուկայ էր եկել: Նա
պարապում էր գինու և անսապունների պուռտուրով:
Չնայելով իր մեծ շրջանառութեան, սաստիկ ժամա-
էր. իսկ որտեղ տեսնում էր մի շահ, մի ակնկալու-
թիւն, առ ժամանակ մի, այն էլ մեծ շգուշութեամբ
թափահարում էր իր գրաբնները:

Սահակը շուկայում պատահելով Արմենակին, մօ-
տեցաւ նրան և հարցրեց.

—Ի՞նչ ունես ծախու։ Ես այլ մի ունակութափար

—Ոչխար, տաւար, ալիւր, իւղ, բուրդ, պանիր, ել
ինչ էք ուզում, պատախանեց նա:

—Ծաւար շատ ունես։ Ես այս մի մաս

—Փսան ու հինգ գլուխ։ Վայրուց բրոյալ մաս

—Ո՞րտեղ են։ Գնանք տեսնենք։

—Մօտակայ բակումն են։ Համեցէք։

Կրկու ծառաներին Արմենակը թողնելով շուկայում

գտնուած իր մնացած ապրանքների մօտ, ինքը ա-
ռաջնորդեց Լեռնեանին դէպի բակը:

Լեռնեանցը տեսնելով նրանց (տաւարի) պարա-
տութիւնը, իր սրտում ուրախացաւ, սակայն արտա-
քուստ ահաճութիւն երևացրեց ասելով:

—Այնքան էլ լաւ չեն, գինը հնաց է։ Այս բան դաս

—Եղան, ասաց Արմենակը, եթէ չես հաւանում,
թող մնայ. Էլ ինչ հարկաւոր է սակարկութիւն անել:

Լեռնեանցը տեսնելով, որ գիւղացու մէջքը պինդ
է, որ այդպէս է խօսում, խօսակցութեան ձևը փո-
խեց. Նա նկատելով, որ գնողների թիւը հետզիւէ
ստուարանում է, անմիջապէս Արմենակին հրաւիրեց
իր տունը ասելով.

—Գնանք մեր տունը՝ ասած, մատ եւ առ առանց.

—Եղա, չնորհակալ եմ, չհասկանալով Լեռնեանցի
անսպասելի հրաւիրի միտքը:

—Գնանք տուն, տաւարդ էլ կառնեմ և ուրիշ
ապրանքներդ էլ փոլը հետո չեմ մանածում, տանն է։

Արմենակը այլ ևս չհակաւակուեց և չետեց աղա-
ցին դէպի նրա տունը։

Սահակի տունը զարդարուած էր կէս եւրոպական
և կէս ասիական ճաշակով։

Տանտէրը հրաւիրեց Արմենակին սմի բաժակ ուօմ-
անուշ անէ և ապա սկսուեցաւ նրանց սակարկու-
թիւնը։ Գործը վերջացնելուց յետոց, վաճառականը
տուեց պատկանեալ դրամը, հանելով երկաթէ արկ-
զիկում ամուր փակուած տեղից։

Լսուեց մերձակայ սենեակի դրան բացուիլը և
երևեցաւ մատուցարանը թէցի բաժակներով, որ բըռ-
նել էր մի հրաշալի արարած, ինը բըռ տիրոջ

միակ աղջիկն էր, նրա սիրելի հայկանուշը: Օրիորդի սևորակ հրացաց աչքերը, գանգուր մազերն ու վացելու հասակը միանգամայն յափշտակեցին կոշտ գիւղացուն: Նա անզգայաբար վերցրեց թէցի բաժակը, միայն չէր հաշտվում այն մաքի հետ, թէ տեսածը մարդկային արարած է:

— Սա երկնքից եկած հրեշտակ կը լինի մտածում էր Արմենակը:

հայկանուշի սևորակ աչքերն ևս ուղղուեցան դէպի անձանօթ հիւրը:

— Խնդրեմ ծանօթանաք, սա իմ միակ աղջիկս է: Արմենակը անել դրութեան մէջ էր գտնվում, չէր խմանում ի՞նչ անէր, մի փոքր աշշածի պէս նայելուց յետոյ, օգնութեան հասաւ նրան բնազդումը. տեղից վերկացաւ և խորը գլուխ տռւեց օրիորդին:

— Զատ ուրախ եմ, ժպտաց քաղաքավարութեամբ օրիորդը:

— Եղջիկ պարոն, դու որ ուրախ ես, ես աւելի ևս ուրախ եմ:

հայկանուշի կարմրափայլ շրթունքների վրայ նորից փայլեց մեղմիկ ժպիտը և անյայտացաւ:

Մինչդեռ վաճառականը իր գործն էր տեսնում շարունակելով խօսակցութիւնը գիւղացու հետ իրանց ապագայ առևտրի մասին, նրանց կենցաղավարութեան, կարողութեան վրայ զանազան հարցեր էր տալիս, նա բացի կցկտուր անխմաստ պատասխաններից ոչինչ չէր ասում:

Արմենակի սիրտն ու ուղեղը պաշարել էին հրաշակի օրիորդի վայրկենական ներգործութիւնից. նրա կոշտացած սիրոյ լարերի մէջ դժնուեց մի բարակ

լար, որ պահուած էր չքնաղատեսիլ հայկանուշի համար:

— Ի՞նչ պատահեց քեզ, հարցրեց Լեռնեանցը նկատելով գիւղացու ալյացուած կերպարանքը:

— Ոչինչ, աղա, ճանապարհիցն է, մի քիչ քէֆս տեղը չէ:

— Գնա, հանգստացիր. այսուհետեւ մենք ծանօթ լինենք, մեր տունը հօ այժմ չես մոռանալ:

— Ճնորհ... էլ չկարողացաւ ասել Արմենակը և հարգածին ման դուրս եկաւ աղայի տնից:

Արմենակը մտամոլոր գնում էր փողոցով. անցորդների բազմութիւնը, կառքերի անընդհատ դրդոցը փոքր սթափեցրին նրան, նա անզգայաբար անցաւ ծառուղին ու նստեց մի նստարանի պրայ, անձնատուր լինելով երիտասարդական գառանցանքներին:

«Որչափ հրաշակի է իմ տեսած օրիորդի սիրուն պատկերը. որչափ գեղեցիկ է սիրոյ այդ հրեշտակը. քո սկ գիշերի նման աչքերը, քո վարդաշուր թըշերը կախարդել են ինձ. հայկանուշ, արդեօք ինձ պէտք է պատկանես. ես հոգով սրտով արգէն նուիրուած եմ. քեզ.»

Արմենակը երևակայում էր իրան օրիորդի գրկում, երազում էր ապագայ հարսանիքը ամենավարդագոյն կերպով, բաց կիրագործուէր: Նա բաւական թուլացել էր և գտնվում էր մի տեսակ անբնական դրութեան մէջ, որ անցորդներից մէկը նկատելով իր ծանօթ գիւղացուն, մօտեցաւ և ձեռքը ուսին թափահարելով, հարցրեց.

— Արմենակ, այդ դու ես. Երբ ես եկել, ի՞նչ կայ, ի՞նչ չկայ: Անձանօթը աւելի մօտից գիտելով նրա սպրդնած երեսը, աւելացրեց:

—Ի՞նչ է պատահել. հօ հարբած չես:

—Ա՛խ... խորը հոգոց քաշեց Արմենակը և ուշքի գալով ճանաչեց Մեսրոպ Գաճաճեանին, իր նախկին յաճախորդներից մէկին:

Ոչ մի հարց չլսելով, Արմենակը պատասխաններ էլ շուռւեց, այլ սկսեց ինքը հարցնել.

— Աղա Մեսրոպ, Սահակ աղային ճանաչում ես:

— Ճանաչում եմ. շատ ան�պիտան մարդ է: Ի՞նչ կայ որ:

— Բաս նրա աղաւնուն,

— Աղջկանը, հայկանուշին:

— Եյուսաւարուս:

— Ճանաչում եմ. ի՞նչ ես ուզում:

— Ոչինչ, ինչու մարդու չի տալիս. ուզողներ չունի:

— Ուզողներին համարանք կայ, բայց հայրը դեռ ոչոքին չի տալիս:

— Նա սպասում է, աւելացրեց Գաճաճեանը, որ ուզողը իր նման հարուստ անուանի վաճառական լինի և ոչ ինձ ու քեզ պէս:

Նոյն իսկ ես ամբողջ երեք տարի նրա յետելից ման եմ եկել, նոյնպէս և ուրիշ շատ փեսացուներ, բայց հայրը ամենքիս էլ մերժել է:

Գաճաճեանի վերջին խօսքերը կարծես սառը ջուր ածեցին սիրաբորբոք գիւղացու վրաց և նորից սկսեց մտածել...

— Ի՞նչ ես շատ խորը մտածում: դու խօմ չես ու զում առաջարկութիւն անել. Այդ ցնորքները մտա-

հան արա. ինչպէս Ելբրուսն ու Կազբէկը իրար չեն դիպչի, այնպէս և դու ու հայկանուշը:

— Գիւղացին մարդ չի, սրտնեղած գիմեց Արմենակը փիլիսօփացութեանը:

— Ինչպէս թէ մարդ չի, մարդ է, այն էլ ամենաանհրաժեշտ տարր է կենցաղավարութեան համար, բայց հասկացողութիւնները տարբեր են:

— Իս ինչու նա ինձ իր տուն հրաւիրեց և այդ կայծը գցեց սրտումս, ընդհատեց գիւղացին:

— Դու որ տաւար չունենացիր, լայաղ էլ չէր անի քեզ ձայն տալու, ուր մնաց թէ տուն հրաւիրելու:

— Միթէ կարելի բան է, որ հայկանուշը ուրիշին լինի, ասեց միամտաբար Արմենակը:

— Քանի մէրդ նոր է, յարեց Գաճաճեանը, տես գործդ, վերջացրու. բոլորը և գնա տուն: հայրենիքից գուրս ուր վրկութիւն չես գտնի: Մնաս բարեաւ, մէկնեց Գաճաճեանը իր ձեռքը և շտապ քայլերով հեռացաւ:

Մի շաբաթ Արմենակը մնաց քաղաքում:

Իրան տուեց Հարբեցողութեան, և բոլոր ձեռք բերած փողերը կամաց-կամաց վատնում էր. որոնում էր հայկանուշին, բայց էլ ոչ մի տեղ չէր պատահում:

Ցուսաբէկ և ձեռնունայն նա վերադառնաւ իրանց հայրենի Տ. գիւղը, հայրը տեսնելով, որ որդին ոչինչ դրամ չի բերել այնքան տարած ասպրանքի փոխարէն, լոեց և խրախուսելու համար ասաց. «ոչինչ, որդի, շահն ու վնասը ընկերներ են»:

Երիտասարդ Արմենակը փոխուեցաւ, ծուլացաւ ա-

մենաթեթև գործ անդամ կատարելուց. սիրոյ կայձը
մեջ հրդեհ էր առաջացրել նրա սրտում. անդադար բոր-
բոքվում էր նա և մղում նրան դէպի օտարութիւն.

Ահա թէ ինչո՞ւ մինչև անդամ իր զարամեալ հօր
աղերսալի խրատներն անդամ անգօր հանդիսացան
նրան իր հայրենի երկրի հետ կապելու համար.

Պ.

ավագանութիւն անդամ անգօր հայձարացան հայց
իմաս ու յա յէ բայց ։ Բ. Ը Թ Ե Շ Տ

Փարտէզից դուրս գալուց յետոյ Արմենակը պատ-
րաստուեցաւ ուղևորուել դէպի Վ. քաղաքը, ուր
բաղդէ և երջանկութիւն ներկայանում էին ոսկէվառ
գոյներով.

Վերջին անդամ նայեց իրանց գիւղի շրջակացքի
գալարազարդ դաշտերին, հրաժեշտ տուեց հայրենի
բլուրներին, թաւ անտառներին և ծաղկափթեթ այ-
դիներին։ Նա ցնորուածի պէս ման էր գալիս մինչև
մութը կոխելը, որից յետոյ դիմեց դէպի իրա պապե-
նական տունը, ուր հայրը նստ սծ երեկոյեան աղօթ-
քըն էր մրմնջում։

Աւանդական ակնածութիւնից յետոյ, որպէս զի
հայրը վերջացնէր իր մաղթանքն առ Աստուած, որ-
դին գարձաւ դէպի նա ասելով։

— հայրիկ, ես վճռել եմ գնալ. օրհնիր վերջին ան-
գամ ճանապարհս և թոյց տուր ձեռքդ համբուրեմ։
— Թող Աստուած լինի օրհնողը. բաց աշխ համ-
բուրելու արժանի չէ անհնազանդ որդին։
— Չեմ կարող չգնալ, հայրիկ։

Օհանը նորից փորձեց խրատներ կարդալ իր որդու
դիմակին, որպէս զի մտահան անի իր կործանիչ մտա-
դրութիւնը, բաց ի գուր տեսնելով որդին անդր-
դուելի է իր վճռում, ասեց.

— Գնա, Աստուած քեզ հետ, բաց ցիշիր իմ վեր-
ջին անդամ ասած խօսքերս։ Հայրենիքից զուրս
ցաւ և տանջանք է։

Սակայն Արմենակի միտքը գիրաւուած էր հայկանու-
շով, նա աշուտով գուրս եկաւ, գնաց ընկերներով
անտառը, ուր և գիշերեց։

Ամուսնու և որդոց մահը, և եթէ գրա վրայ Էլ
աւելացնենք Արմենակի վճիռը, կարելի է հասկանալ,
թէ ինչ հարուած կարող էր տալ զառամեալ ծերու-
նու կարճատես կեանքին։ Օհանի օրերը համրած էին.
մահուան հրեշտակը արդէն երդիկիցն է նայում,
Եյդ գիշերուանից նա անկողին մտաւ և այ ևս չեր-
կացաւ տեղից։

Հետեւեալ օրը Արմենակը ընկերներով վերկացաւ
գնաց իրանց պարտէզ, ուր հայրը տովորութիւն ու-
նէր ամենից վաղ դուրս գալ և նստել իր սիրած
թթենու տակ, նա ուզում էր մի կերպ յաջողեցնել,
որպէս զի կարողանաց մի հնարքով նրա ձեռքը համ-
բուրելու։

Հայրը պարտիզում չէր որդին գարմացած մնաց
այս և այն կողմ նայեց, որոնեց, պատահողներին
հարց ու փորձ արեց և ամենքիցն էլ իմացաւ, որ
այսօր չեն տեսել Օհանին։

Արմենակը արագութեամբ մտաւ իրանց տունը և

տեսարան ներկայացաւ նրա աչքերին։ Ծերունին վրդովուած դէմքով, բայց միանգամայն անշարժ դրութեամբ պարկած է անկողնում։ Զայն տուեց, պատասխան չկաց, շօշափեց և տեսաւ մարմինը սառած։

Օհանի հոգին վրդովուելով երկրաւոր տանջանք ներից, նոյն գիշեր սլացել էր դէպի յաւիտենականութիւն, ուր չկաց վիշտ, ուր չկաց տառապանք։

Կուսական սիրոյ զգացմունքը առ ժամանակ տեղի տուեց հայրական սիրուն, արտասուագին աչերով թաղեց հօրը, նրան—որի գառն քրտինքով վաստակած կալուածները պիտի քայքայուէին որդու յանառութիւնից։ Օհանը գեռ օրհասին գուշակել էր իրանց օջախի մօտպուտ քայքայումը։

Արմենակը միայնակ է։ Հանշուշտ պէտք է գնամ։ Այժմ նա մտածում է, Հանշուշտ պէտք է գնամ։ Բայց ինչ անեմ կալուածները. ծախեմ, բայց նվ է գայց ինչ անեմ կալուածները. ծախեմ, բայց նվ է գնողը, քանի որ ամենքն էլ ունին. ումը յանձնեմ, որ կարողանաց ինձ սկզբից փող տալ և ապա տարէց տարի էլ ուղարկի...»

Արմենակի մտածմունքները ընդհատեց գոան ճռոճուցը, որից յետոյ բացուեցաւ և երևեցաւ գիւղի յայտնի վաշխառու որին Գէլ-Սարգիս մականուն էին տալիս։

— Բարի աջողում, ասեց մտնողը. լիս դառնաց քո հօր հոգին. դու շատ ապրիս։

— Աստուծոյ բարին Սարգիս ջան։

— Լսել եմ, որ դու ուզում ես հեռաւոր երկիրներ գնալ պանդխտելու համար, ասեց Գէլ-Սարգիսը։

— Եցի, վճռել եմ գնալ առ այժմս Վ. Քաղաքը։

— Մեռանք, ախպէր, տեղս նստելով, փթեցինք. ջահել ես, գնա աշխարհ տես, փող աշխատիր. դարգակ ծլքերին որ մտիկ տաս, ինչ կը դուրս գայ..

— Օրհնուի գո լեզուն, Սարգիս ջան։

— Նրանք, շարունակեց Գէլ-Սարգիսը որոնք օտարութիւն են գնացել՝ բաղդ որոնելու համար, միշտ գոհ են եղել և մեծ հարստութեան տէր են դարձած։ Ի՞նչ ես տեսնում մեր ապականուած հողի մէջ. անվախ գնա այն կողմերը, ուր քեզ երջանկութիւն և փայտուն ապագայ է սպասվում։ Ի՞նչ ես տեսնում մեր գիւղում. օր չէ անցնում, որ մի որևէ գիւղացին չգայ մօտս և չասի. «աղա, քէ մատաղ, երկու թուման տուր, երեխէքս հաց չունին։» Ես էլ անտրտունջ տալիս եմ. Ամսական միայն մի մանէթշահ եմ վերցնում, նեղ տեղը օգնում եմ և դեռ էլի գանգատվում են, թէ Սարգիսը վատ մարդ է։ Արի ու մեր գիւղացիներին բարութիւն արա. Եղբայր, ես ինքս էլ շատ զզուել եմ դրանցից. եթէ այդքան փողերս ցրուած չինէի սրա նրա մօտ, վաղուց թողած կը լինէի այս անիծեալ գիւղը։

— Ինձ ևս ատելի է Տ. գիւղը, ասեց Արմենակը։

— Անցեալներս Դ. ինձանից 100 րուբլի պարտք էր վերցրել չորս ամիս ժամանակով, շարունակեց Գէլ-Սարգիսը, — առանձին պայման ունէինք. Դ. պէտք է տար 40 րուբլի տոկոս, և եթէ ժամանակին զենքը 100 րուբլի էլ տուգանք էր նշանակուած. Լըրացած ժամանակին գումարս չստացայ, ես այժմ արգէն բողոքել եմ հաշտարար Պատաւորին և 240 րուբլու կատարողական թերթ եմ ստացել. Ապա դու ինքդ դատիք, ես մեղաւոր եմ։



— Դու արդար ես վարուել, — պատասխանեց Արմենակը: Ես մի խնդիր ևս ունիմ, Սարգիս ապէր, այն է՝ մի հաւատարիմ մարդ գտնես, որ մլքերս նրանց յանձնեմ կապալով, որոշեալ գումարը կանխիկ ստանալու պայմանով:

— Ինձանից աւել, ոչ ոք գլուխ չի դնի և բացի դրանից ոչ ոք չի համաձայնի սկզբից որեւէ գումար տալու:

— Արա մի այդպիսի բարութիւն և յացտնիր պայմաններդ:

— Սկզբից քեզ հարիւր ըուբլի կը տամ և ապա ամսական կուղարկեմ տաս տաս ըուբլի:

— Համաձայն եմ, պատասխանեց Արմենակը, առանց երկար մտածելու և կնքեցին պայմանաթուղթը ինը տարով, Պայմանաժամկց յետոյ Գէլ-Սարգիսը պարտաւոր էր կալուածները յետ դարձնել:

— Այս գիշեր իրիկնահացին ինձ մօտ համեցէք, հրաւիրեց Գէլ-Սարգիսը և դուրս եկաւ Ապրոյենց բնակարանից:

Հետևեալ օրը, վաղ առաւօտեան, մի ձիաւոր եափընջին ծածկած և բաշլուղը գլխին՝ անցնում էր Ապրոյենց տան առաջ ասելով. «Մնաս բարեաւ, իմ տուն հայրական, մնաս բարեաւ, իմ մանկութեան օրօրան:»

Այդ ձիաւորը Արմենակն էր: Առ զգաց Յէ զառ Այս Հաւաքանաց ոյ զամար առ Յէ զգաց ՅՈՒ — ոյն որ ներս ոչ զարդարու զարման միջանաւ Ցայտը ՅԱՇ և միջանաւ զարման ոչ յարու մէք որ արև վճառու ոչ եղթեն մաքաղաքամ որդու ու արև վճառու ոչ պարզ ըզմի

— Պար ոչ զմնիքարու ՅԱՇ բայի առ դրձ տարու ու դրանից դժունօտա ու մամանարը տոյն հայք Ա Ա Ն Ը Պ Ա Ր Հ Ի Ն ։

Արմենակը մտրակեց իր սեաթոցը ձին և սլաշտ գէպի իր ցանկալի առարկան,.. Նա արդէն ճանապարհին էր:

Վերջին անգամ նայեց իր հայրենիքին և խորը ախ քաշեց, տալով նրան իր հրաժարական ողջոյնը, բաց ձին առաջ էր ընթանում:

Պուտով Տ. գիւղը աչքից աներեզմացած էր:
Լայն խճուղին թողնելով Արմենակը ընտրեց նեղ շաւիղը, նրա կարծիքով թէ կարճ կը կտրւէր ճանապարհը և թէ աւելի շուտ կարժանանար նրան տեսնելու: Անցնում է լեռներ և ձորեր. մտնում է անտառի խորքը, նորից դուրս գալիս. տեղ տեղ երեսու են սեպացած ժայռեր, որոնց ազրերը լիքն են ամենի գազաններով, մանաւանդ օրուայ այն ժամանակը, երբ խաւարն իր յաղթանակն էր տօնում լուսոյ դէմ: Քանի գնում է, անձուկ ճանապարհը այնքան երկարում է. բարձրանում է անանցանելի լեռներ, տեղտեղ ոտքով ծիու սանձից բռնելով: Մի փոքր հանգստանալուց յետոյ, շարունակում է ուղին: Նորից լեռներ, ահոելի ժայռեր, մուալ անտառները կտրելով առաջ է գնում: Խաւարն արդէն իր թևերն էր սփոռում երկրիս վրայ: Ոչ մի մարդկայն արարած չի երեսում: Մի ահաւակ սարսուռ զգաց Արմենակը տիրող այս ամայութեան մէջ: «Ով գիտէ, մտածում էր նա, թէ որքան աւազակներ թագնուած էն այս բարձրաբերձ լեռների և մութ անտառների մէջ, Թուփերն

ու մացառները նա թագնուած աւազակներ էր կարծում. սիրոյ զգացմունքն ու ամօթաբեր երկիւղը կատաղի կոխւ էին մղում իրար դէմ:

Արմենակը կանգ առաւ մի յարմար տեղ. ձին կապեց թուփից, հանելով խուրջինն ու թամքը. Անաստունը առատ սնունդ գտնելով զմրուխտանման խոտերում՝ իր գործն էր տեսնում. Արմենակը խուրջինը գլխատակ արեց, որի մէջ էր թէ դրամը, թէ զանազան արժողութիւն ունեցող իրեր և պաշարեղինքն բոլորովին ալսորժակ չունէր բան ուտելու. Եափուն ջոկ ծածկեց գլուխն ու մարմինը, և պատրաստվում էր Մօրֆէսի գիրկը մտնել:

Պէս-պէս մտքեր պաշարել էին նրա ուղեղը. բայց բոլորն էլ աղօտ էին մի մտապատկերի առաջ, որ այս միջոցին ներկայանում էր հրաբորբոք աչքերով... Սէկ գլուխը դուրս հանեց, կարծելով, որ հայկանուշն է, բայց վայրենի բնութեան երկիւղը դիտելով մի քայլ սարսուռ զգաց, նորից գլուխը պահեց եատեսակ սարսուռ զգաց, հայրենիքից հեռանալն ու հայկանուշի փունջու տակ: Հայրենիքից հեռանալն ու հայկանուշի սէրը երկար կոխւ էին անում, որ յանկարծակի աչքերը խփեց՝ խոր քուն մտնելով:

Վաղ առաւօտեան Արմենակը ձին թամքելով, ծածկեց եափունջին, նստեց ձիու վրայ՝ շարունակելով ճանապարհը: Դարձեալ ահուելի սարեր, անանցանելի ճանապարհներ: Վերջապէս բացուեցաւ մի մեծ անճանապարհներ: Դիմում անցնում էր Արմենակը: Դեռ տառ, որով այժմ անցնում էր Արմենակը: Դիմում անցնում էր անապարհներ, մնաց մասնակի մերժուած գույս երևաց: Խրախուսված Արմենակը, մըտրակեց, ձին և կէս ժամից լետոյ արդէն բաղսում էր սակաւաբնակ թուրք գիւղի առաջին խրճիթը:

— Քիմ սան, (Ո՞վ ես դու) գուաց թուրք տանտէրը:
— Ալլահի խաթեր, ճանապարհորդ եմ, ձեր դօնաղն եմ:
— Ճեռնաբնակ մահմեղականը շտապով գուոր բացեց
ասելով:
— Գլխիս վրայ, համեցէք, մեր տունը քեզ փէշ-քէշ:

— Ալլահը լինի ձեր պաշտպանը, ասեց Արմենակը ու խուրջինը ցած բերելով ձիուց՝ մտաւ հիւրասիրող թուրքի բնակարանը:

Գիւղի աւազակաբարոյ թուրքերը յայտնի էին իրանց հիւրասիրութեամբ։ Արմենակը շատ լաւ գիտէր, որ հայր թուրքից պատիւ և յարգանք սպասում է միայն իր տանը։ Հէնց որ հիւրը տանից ոտը դուրս դրեց՝ վերջացաւ։ գուցէ առաջին յարձակողը տան տէրը լինէր։ Այս էր պատճառը, որ Արմենակ շատ զգուշանում էր իր փողի և իրերի համար, խուրջինը անմիջապէս իր գլխատակը դնելով։ Զին ախոռում կապուած՝ մեծ ախորժակով իր կերակուրն էր ուտում։ Արմենակին բերին մի սինու վրայ պանիր, հաց, կարագ, սեր և մածուն։ ինքն էլ խուրջինից հանեց մի շիշ օղի, որից մահմեղականն ևս խմեց մեծ ախորժակով, հակառակ Մարգարէի խղանական պատուէրի։

Արմենակը անհանգիստ անցկացրեց զիշերը։ Լուսաբացին նա շնորհակալութիւն յայտնեց թուրք տանտիրոջը, թամքեց ձին և ճանապարհ ընկաւ։ Թուրքը յետուից հասնելով՝ խեց նրա եափինջին, որի վրայ զիշերուանից աչք էր դրել։

Հարուածող մտրակից՝ ձին առաջընթացաւ, առանց մտածելու, թէ իր բռնած ուղին հոր է տանում։ Փչեց հիւսիսացին պաղ քամին, որն իր հետ քշելով սև սև ամպերը, պատեց երկինքը, ծածկելով լեռներն ու ձորերը։ Անձրեւ արդէն թրջում էր յափշտակուած ճանապարհոցին, բայց կարծես նա ոչինչ չէր զգում։ Այս դրութեամբ նա շեղուել էր ճանապարհից։ անցել էր տասն վերստից աւելի։ Նայում է չորս կողմը և ոչ մի բան չի երեւում։ ոչ բնակութիւն և ոչ մի արարած չէր նշմարվում։ Զին գլխիկոր առաջ է գնում։ Արմենակը մէկ էլի նայեց իր շուրջը և

համոզուելով, որ մոլորուել է՝ ամբողջ մարմնով սոսկաց և սրտնեղութիւնից սկսեց արտասուել։ «Ում դիմեմ։ ճանապարհ անճանօթ, երկիրն օտար, դառնամ յետ... Բայց ուր դիմեմ... անիծուիս հայկանուշ, ոչ, ոչ, ինչ կուզէ լինի—պէտք։ Է հասնեմ փափագիս։»

Փորձանման դահլիճ վճառակա միջաք բան ըլլառ գրուածի հօմանման խոր վճար մի աղման առ աղման իւ Շամբանց Շամբանց ուսուլ մշտի ողբարյան դժմանու և ոչ ութիւնութիւն պահանջում է։

ԱԽԱԶԱԿԱՆԵՐԻ ՁԵՌՔԻՆ։ Լուսաբացիս մասն խորս վերը զրոյ զըստ զայտ վաշը արի։ Անձրեւ աներն հատտեղում էր։ Երկինքը ուժգին որոտում էր։ Ժամանակ առ ժամանակ արձակելով իր մահաբեր շանթեր՝ վայրկենաբար լուսաւորում էր տիրող սարսափելի խաւարը։ Արմենակը ամբողջ մարմնով դողում էր։ շորերն ու մարմինը ամբողջապէս թրջուել էին։ Ձերմադին մաղթանքներ էր ուղղում առ։ Աստուած, որ գէթ խղճար իրան, վերջ դնելով տեղատարափ անձրեին, բայց ձայնը անլսելի էր։ Բնութիւնն անգամ չէր խնայում։ Արմենակը մինչև կաշին թրջուել էր։ ձին մի քանի քայլ ևս արեց։ Նրան պատահեց մի աւերակ շինութիւն, — կանգ առաւ և այնտեղ պատսպարուեց։ Գետնի վրայ փըռուած՝ նա սաստիկ դողում էր։ Խառն մտքերը կրկին պաշարեցին նրան և սկսեց նիրհել։ Յանկարծ սթափուեց և մի դառը ժպիտ անցաւ նրա վշտահար դէմքի վրայ։ բնազմամբ տեղից վերկացաւ և ձիու սանձը բռնելով սկսեց մտախոհ քայլել խորհրդաւոր մթութեան մէջ։ Անձրեւ ու քամին դաղարել էին և մկնում էին թուխպ ամպերը շարժուել, թէպէտ

իխստ դանդաղութեամբ։ Հեռաստանում երեաց մի ուրուական, որ անդար շարժուելով՝ դիմում էր դէպի ժամանակի աւերմունքներին Ենթարկուած շէնքը։ Արմենակը ուրախացաւ, որ գոնէ այժմս բաղդը ժպտաց նրան, մարդկային արարածի երեսը տեսնելով։

Անցաւ մի քանի րոպէ։ Անձանօթ ձիաւորը՝ ոտից մինչև զլուկս սպառազինուած՝ կանգնած էր նրա առաջ։ Դէմքի կոպտութիւնը և անվեհեր հայացքը հասկացնում էին նրա ով լինելը։ Արմենակը առաջ եկաւ դէպի ձիաւորը, խորը զլուկս տալով նրան։

—Ո՞վ ես դու, ուր ես գնում, հարցրեց անձանօթը։

—Տ. գիւղիցն եմ, գնում եմ Վ. քաղաքը բաղդ որոնելու։

—Միթէ հայրենիքումդ բաղդ չկայ։

—Ո՞վ է բաղդաւորուել իր հայրենիքում, որ ես բաղդաւորուեմ, տհաճութեամբ պատասխանեց Արմենակը։

—Հացի պակասութիւն ունէք, ինչ է։

—Ոչ. մենք բաւական հարուստ ենք, քառասուն օրավար հող, այգիներ, տաւար և այլն ունենք։ Մեր տունը լիքն է ամեն տեսակ Աստուծոյ տուած բարիքներով, աւելացրեց Արմենակը։

Անձանօթը Արմենակի վերջին խօսքերը լսելուն պէս՝ աչքերը չուց և սկսեց չորս կողմը դարձնել։

Ընթերցողը հասկացաւ, որ անձանօթը մի աւազակ էր և անդամ մի աւազակխմբի, որոնց ապաստանարանը վայրենի բնութիւնն էր։

Կամենալով իր դտած որսը բոլոր ունեցածներով

կենդանի հասցնել իր պետին, դարձաւ դէպի Արմենակը՝ ասելով։

—Դու մրսում ես, գնանք մեր բնակարան, մօտ է այստեղին, գիշերը հանգստացիր և վաղը նորից շարունակիր ճանապարհութեամբ։

—Քատ. շնորհակալ կը լինեմ, եթէ մի այդպիսի բարութիւն կանես, ասեց Արմենակը միամտաբար։

Անձանօթը առաջ ընկաւ պատուիրելով Արմենակին իրան յետևել։ Խաւարը դեռ տիրում էր. Արմենակը չէր հասկանում, թէ ուր էր գնում. «սա մի աւազակ չէ, մտածում էր, չի խաբում արդեօք, կարելի է մի բարեհոգի մարդ է»։

Ոլորապտոյտ ճանապարհներով աւազակը տանում էր Արմենակին։ Որքան գնում էին, նրանց առաջը բացվում էին աւելի ևս հսկայածե լեռներ իրանց ահռելի դիրքով։

Սարսափը տիրեց Արմենակին. Նա վերջապէս հարցրեց։

—Ո՞ւր ենք գնում, մօտ է բնակարանը։

—Մօտ է, շուտով կը հասնենք, պատասխանեց աւազակը։

Եյդ տեսակ հարց ու պատասխաններ դեռ շատ կրկնուեցաւ։ Արմենակը բոլորվին ցողնել էր. Վերջապէս բացականչեց։

—Մեռայ, եղբայր, հասնք թէ ոչ։

—Մի քիչ համբերիր, մի քանի քայլ է մնացել միայն։

Կէս ժամից յետոյ անձանօթ աւազակն ու Արմենակը մի կրծից անցնելով՝ մօտեցան մի քարայրի։

Աղօտ լոյս էր երեսում այնտեղից. Երկուսն էլ դի-

մեցին դէպի այն կողմը. Ներս մտնելուն պէս Արմենակի առաջ հետևեալ տեսարանը ներկայացաւ, մի խումբ մարդիկ բոլորելով վառվող կրակի շուրջը իրանց ընթրիքն էին անում, ժայռի արանքներում կախած էին դաշոյններ, սրեր, հրացաններ, կէռ դանակներ և այն, Տեսաձը մի աւազականոցի տպաւորութիւն էր թողնում, մանաւանդ աւելի ևս համում գուեց, երբ տեսաւ, որ դուրսը տիրում էր նոյն ամայութիւն, նոյն ահեղ ժայռեր:

— Սա մեր հիւրն է, դիմեց Արմենակին բերող աւազակը մի ալեոր մարդուն, որը երկայն շահում կլայնում էր:

— Կաւ պատիւ տուեցէք, խօսեց աւազակը, ապա իր խոժոռած դէմքով դարձաւ դէպի Արմենակը և ասեց բիրտ ձեռով:

— Ի՞նչ ազգ ես:

— Հայ եմ... պատասխանեց Արմենակը, երկիւղից մեռելի գոյն ստանալով: Նրա աչքերը ակամայ ընկան փայտէ երկայն ձողերի վրայ, որոնցից կախ էին ընկել զանազան գէնքեր:

Ալսորը, ինչպէս երեսում էր, աւազակների գլխաւորն էր, հրամայեց խոտ ածել իր մօտ և հրաւիրեց Արմենակին նստել իր կողքին, ի նշան առանձին յարգանաց...:

Արմենակի աչքերը ընտելանալով քարայրում տիրող կիսախաւարին, սկսեց աւելի պարզ նկատել, որ մի անկիւնում անկարգ ընկած էին զանազան արկղներ, պայուսակներ, մուշտակներ, տրեխներ, դուլպաներ և ուրիշ զանազան իրեր, որոնք բարձրացել պաներ և ուրիշ զանազան իրեր, որոնք բարձրացել էին մի բլրակի նման. մի տեղ էլ տեսաւ սպանուած

եղնիկի դիակը և իրանց պաշարեղէններ: Աւազակապետի վզից կախ էր ընկած ոսկեայ ժամացոյցի փայլուն շղթան:

Արմենակի դէմքը մռացլուեց. Նա վերջնականապէս համոզուեց, որ ընկել է աւագաների ձեռքը: Յուրաքը մի կողմից, ահն ու սարսափը միւս կողմից, մի տեսակ յուսահատութեան մէջ էին գցել Արմենակին:

Վերջին ոյժը հաւաքեց. մօտեցաւ բոցավար խարոզին և սկսեց իր սառած մարմինը տաքացնել ու թրջուած շորերը չորացնել: Աւազակները մէկ-մէկ դուրս էին դալիս. մնացին Արմենակն ու ալեոր աւազակապետը, Աւազակների գլխաւորը առաջարկեց հաց ուտել...

Այդ միջոցին Արմենակին բերող աւազակը դուրսը պատմում էր իր ընկերներին, թէ ինչպէս ճանկեց այդ որսը, թէ ինչպէս խաբելով բերեց նրան և այն: Արիւնածարաւ աւազակները վիճում էին, թէ ով պէտք է սպանի. աղմուկը հետզետէ այնպէս բարձրացաւ, որ լսելի եղաւ քարայրում թեք ընկած աւազակապետին: Նա շուտով դուրս եկաւ և վերջ դրեց վիճաբանութեանը՝ ասելով.

«Ճատ ղալմաղալ միք բարձրացնի. ինչպէս կը հրամայեմ՝ այնպէս էլ կը վարուէք: Ես ձեզանից շատ և շատ փորձուած եմ. մի վիշտ, մի հոգեկան տանջանք կրծում է նրա սիրատը. հարկաւոր է կեանքը խնայել...» Աւազակները գլուխ տուեցին տհաճութեամբ իրանց մեծին:

Արմենակը միայնակ մնալով այն որջում՝ մտատանջգում էր հայրենիքի ներսի և դրսի պատկերների

Երեակացութեամբ: Տեսնում էր հայրենական տունը, բոլոր երջանկութեամբ, առանց հայկանուշի. տեսնում էր հայրենիքից դուրս եղած ցաւ, կակիչ տառապանք, միայն մի վարդագոյն ցոյս...:

Մի աւազակ ներս տարաւ շամփուրով եղնիկի մսից խորոված, տուեց Արմենակին, բայց ով ունէր ախորժակ հաց ուտելու:

Աւազակապետը հրամացեց իրանց հնամաշ հանդերձներ հազցնել, իսկ իր թրջածները վերցրին, իբր թէ չորացնելու համար: Արմենակը սաստիկ թուլացած էր. սաստիկ չօգնածութիւնը, անձրևն ու երկիւղը ազգել էին նրան: Թմրութիւն եկաւ վրան և շուտով տարածուեցաւ խոտի վրայ: Քունը ացնպէս շուտ վրայ եկաւ, որ ամենեին չնտածեց վտանգի վրայ: Մինչեւ անգամ չգիտէր, թէ ուր է իր ձին, որտեղ է խուրջինը:

Արմենակը խոմիացնում էր, ժամանակ առ ժամանակ խորը յոգւոց հանելով:

Նրա քնելուց յետոց աւազակները անմիջապէս ըսկեցին քրքրել խորչինը: Նրանց ուրախութիւնը անշափ էր, երբ այնտեղ գտան մի քանի թուման ափող մի շորի մէջ փաթաթած, մի քանի ոսկեաչ և արծաթեայ իրեր և տեսակ-տեսակ առարկաներ:

—Ի՞նչպէս խնայենք նրա կեանքը, որ բոլոր ունեցած վերցնենք, խօսեց մի աւազակ:

—Ճատ հեշտութեամբ, ասեց միւսը. նայիր ինչպէս է խոմիացնում. ողորմելին կարծես, իրանց տանն է ի խոմիացնում. ողորմելին կարծես, իրանց տանն է պառկած, մենք այնպէս կը վերցնենք, որ նա բան չի իմանայ: Հապա նրա սեաթոյր երիվարը, յարեց աւազա-

կապետի մօտ կանգնողը:

—Զին էլ, կը բերէք այն քարանձաւը, ուր մի շաբաթ առաջ էինք գտնվում, հրամացեց գլխաւորը:

—Ճատ գեղեցիկ, ասեց աւազակը. մենք այնպէս կը տանենք, որ սատանան էլ չի գտնի մեր որջը:

—Ճան հոտառութիւնն էլ քիչ է այդ ծակ ու ծուկերը գտնելու, վրայ տուեց Արմենակին բերող աւազակը:

—Երկար խօսել պէտք չէ, շուտով կատարեցէք այն, ինչ որ հրամացում եմ, դարձաւ գլխաւորը, հաւաքեցէք բոլորը և տարէք այն քարանձաւը:

—Ասածդ կատարուած է, ասեցին աւազակներն ու մի ակնթարթում անյայտացան, տանելով իրանց հետ բոլոր իրերը, որոնց մէջ էր և Արմենակի խուրջինը ու շորերը: Այրը մաքրելուց յետոյ, ամենից վերջը աւազակապետը գնաց նստելով Արմենակի սեւաթոյր ձիու վրայ:

Արմենակը խորը քնի մէջն էր: Խառը երազները նրան այնպէս հեռու էին տարել, որ դափի և զուռնան չէր կարող զարթեցնել:

Լուսաբաց էր: Երբ արեգակը սկսեց ցոյց տալ իր հրաշալի պատկերը հօրիզոնից, ոսկեղին ճառագայթները ընկան ուղիղ նրա երեսի վրայ: Արմենակը մի քանի ամգամ շուռ ու մոռ եկաւ և աչքերի խուփ կոպերը շուտով բաժանուեցան միմեանցից: Արթնանալուն պէս, նա իսկոյն չկարողացաւ հասկանալ, թէ որտեղ է գտնվում: Չորս կողմը նայեց, ոչ մի մարդ չի երևում. տեսնում է դարդակ քարայր, նայեց այս և այն կողմ, ոչ իր խուրջինն էր գտնում և ոչ իր սիրելի ձին: Սկզբում շփոթուածի պէս եղաւ

և իրան կորցրեց, բայց վերջը ուշքի գալով՝ հասկացաւ իր գլխով անցածը...:

պրատուլը ըշխանայ՝ նախար զմէյ շառա նիւրա
սձրիւ զմէն պիտի միւրան Զ. շառա միւրիդը տուի
ոցչո զմէ մնար ու յ մնաւաս որ գմնեան որ
ու մաս բայ ա մնաւաս ու յ մնաւաս մնի—

Օ Ֆ Ն Ո Խ Թ Ի Ւ Ն

Արմենակը գլխիկոր նստած էր և երկար ժամանակ մտածում էր իր անբաղդութեան վրայ, անիծելով այն ծանր գաւազանը, որ առաջին անգամ բոնեց դէպի պանդխոտութիւնը դիմելիս:

Անախորժ, մտածմունքները պաշարել էին նրա ուղեղը. ամենից աւելի ազդում էին նրա վրայ այն գայուերը, որոնց մէջ գցել էր նրան իր թշուառ բաղդը. Նա սկսեց մի հնարք մտածել այս անել գրութիւնից դուրս գալու համար:

«Տէր Աստուած, սկսեց կանչել, ինչ անեմ այս ամայի տեղում, ցոյց տուր ինձ մի ճանապարհ, մի առաջնորդ։ Դու, որ Ամենաբարի Արարիչնես, մի կորցրու Քո անառակ որդուն։ Ամենաղղորմած հայր, ներիր մեղաւորիս, թէպէտ արժանի չեմ...»

Արտասուրի խոշոր կաթիւներ վայր ցայտուեցան նրա դայկացած այտերից։ Համարաւոր մտքեր, մէկ միւսի լետեսեց արագութեամբ անցնուած էին նրա գլխով, նա մի տեսակ անբնական դրութեան մէջն գլխով, նա մի տեսակ անբնական դրութեան մէջն էր. ոչ քնած էր, ոչ արթուն, երեսն ննջում էր, էր. ոչ քնած էր, ոչ արթուն, երեսն ննջում էր, էր. հառաջում և քանի մի անգամ էլ գառաներբեմն հառաջում էր ընկնում։ Արմենակը հոգիների ցանքների մէջ էր ընկնում։ Արմենակը հոգիների աշխարհումն էր։

Մի սպիտակափառ ծերունի, կոշտ ձայնով, բայց

դողդոջուն ձեռքերով, երեաց յանկարձակի, սկսեց նրա հետ այսպէս խօսել. «Արդեակ, տեսնում ես անհնազանդութիւնը, իմ խրատներին լսելը—ուր է տանում քեզ, մի շարունակիր այն ճանապարհու, որը դէպի կործանումն է տանում, դարձիր հայրենի երկերդ, առ վաշխառու Գէլ-Սարգսից քո կալուածները. աշխատիր և հանգիստ սրտով ապրիր։ Ցոյսդ գարձեալ չկորցնես, որ բաղդաւոր կը լինես։ Մինչեւ անգամ հագած շորերդ էլ չկարողացար պահպանել, գոնէ դրանից ամաչիր...»

«Յետ գարձիր» գոռաց ծերունին և անցատացաւ։ Դա Արմենակի հօր ուրուականնէ էր։ Արմենակը գարթնեց. հոգին ճնշուած էր և սիրտը խոռոշուած։ Ներսի այդ վիճակը լաւ արտայացտվում էր նրա դեղնած, բայց մտայոց դէմքի վրայ։ Նրա կոշտացած լարերն անգամ անկարող եղան պահել հոսող արտասուքները և շուտով մի քանի կաթիւներ գլորուեցին նրա աչքերից։

«Աւազակ... անհնազանդութիւնն... հայր... հայրենիք... հայկանուշ...» խառն մտքերը կրկին բռնել էին նրան։ Փորձեց բարձրանալ, բայց ոտները չհնագանդուեցին. վերջին ճիգ թափեց և սկսեց առաջ գնալ, առանց մտածելու, թէ ո՞ր կողմը։ Ծխուր մըտածմունքները կրկին պաշարեցին նրա գլուխը։ Արմենակը սկսեց դանդաղ քայել։

Մտամոլոր գնում էր Արմենակը։ «Անիծածները մինչև անգամ շորս չթողին. այժմ հւր դիմեմ այս պատառոտուն հանդերձներով։» Չորս ժամ անցաւ և քաղցր բանեց նրան։ ոչ ուտելու բան ունէր և ոչ ջուր էր պատահում։ Դարձեալ մի քանի վերստ

գնաց խորը ձորերի միջով, նրան պատահեց մի ժայռ,
որտեղից դարձեալ մի այր նկատեց. Արմենակը վա-
խեցաւ. մի գուցէ թէ դա էլ մի նոր աւազականոց
լինի. ճանապարհը փոխեց. նա սկսեց արագ-արագ
անցնել սեպացած ապառաժների զառիվազրով. Յան-
կարծ մի մեջ քար արկուեցաւ քարափից, ուր տա-
րիների ընթացքում անհաստատ ընկած էր, և եթէ
նրա ոտին չդիպէր, յաւիտեան կը ջաղջախէր, գցե-
լով նրան խորը անդունդների մէջ. Ոտի ցաւից և
վախից աւելի ևս գունաթափուեց. էլ չկարողացաւ
վախից աւելի ևս գունաթափուեց. էլ չկարողացաւ
շարունակել, ոտները ծալուեցան և մի քանի ժամ
մնաց անշարժ արձանացած, ինչպէս մի մեռած դիակ:
Ուշքի գալով, նրա ականջին հասնում էր մօտա-
կացքով հոսող առուակի կարկաչիւնը. Խոնչացած
անդամներով նա մի կերպ մօտեցաւ ջրին, լուացուեց,
և միքիչ էլ խմելով՝ սկսեց բարձրանալ ու քայլել,
դառնաղէտ հառաջանքներ արձակելով էր անսփոփ
սրտից:

—Ով Ֆէր իմ, շնորհակալ եմ, որ գոնէ կեանքս
ինայում ես. ես մեղաւոր եմ Քո առաջ:
Սովածութիւնը նորից զգալի եղաւ նրան: Այդ մի-
ջոցին բազէն յարձակուեցաւ մի աղաւնու վրայ: Բա-
զու վախեցած ճանապարհորդից, թողեց որսը և թը-
գէն վախեցած ճանապարհորդից, թողեց որսը և թը-
գէն բարձր, դէպի երկնքի անհուն տարածութիւնը:
ուաւ բարձր, դէպի երկնքի նման վրայ պիծաւ անօթի Արմե-
կատաղած զայլի նման վրայ պիծաւ անօթի Արմե-
կատաղած անցնչացած թոշունի վրայ, և սկսեց
նակը արդէն անշնչացած թոշունի վրայ, թևա-
շարունակել, այն, ինչ որ սկսել էր գիշատիչ թևա-
շարունակել, իշտահով կրծելով թոշնի հում միսը: Առանց
ւորը, իշտահով կրծելով թոշնի հում միսը: Առանց
հասկանալու, թէ ուր կը հասնի՝ նա շարունակեց իր
հասկանալու, թէ ուր կը հասնի՝ նա շարունակեց իր
հանապարհը: Երեկոյեան դէմ, բաղդի մի անսելի
ճանապարհը:

բերմունքով և իրան աննկատելի կերպով ընկել էր
լայն խճուղու վրայ: Ճանապարհը գալարուած էր ահազին սպիտակ
վիշապի նման: Յետ նայեց և հեռուից նկատեց մի
սւ կէտ, որ փոքր առ փոքր իր կողմն էր շարժ-
գում. մի քիչ էլ սպասեց և որոշակի տեսնում էր մի
ձիաւոր: Սարսափը նորից տիրեց նրան: «Մի գուցէ,
թէ դարձեալ մի աւազակ է. բայց ի՞նչ ունեմ, որ
ինչս խիեն. մի չարքաշ կեանք է մնացել, թող այն
էլ խիեն, փոյթ չէ,» մտածում էր Արմենակը և սկսեց
կամաց-կամաց առաջ գնալ:

Ճիաւորը մօտացաւ: Նա պատահելով հնամաշ հան-
գերձներով և տառապանքի կնիքը կրող Արմենակին,
դարձաւ դէպի նա.

—Բարի աջողում:

—Աստուծոյ բարին, հազիւ թէ լսելի ձայնով պա-
տասխանեց Արմենակը:

—Ուր ես գնում:

—Այս... ասեց Արմենակը հառաշելով, մի հարց-
րու:

—Ի՞նչ է եղել քեզ, ի՞նչ է պատահել:

—Ջատ բան... աւազակների մասին հօ ոչինչ չես
իմացել.

—Օչինչ, պատասխանեց ճանապարհորդ ճիաւորը:

Արմենակի կցկտուր հարցերից և պատասխաննե-
րից ճիաւորը հասկացաւ, որ նա կողոպտուած է:

Անձանօթ ճանապարհորդը Թ. բաղաքիցն էր.
պարապում էր բրդի առուտուրով, նրան կոչում էին
Արտաշէս Պատուականեան:

Արտաշէսն ու Արմենակը շուտով մտերմացան իրար

հետ: Վերջինը պատմեց իր դլիսին եկածը: Արտաշէսը լսում էր լարուած ուշադրութեամբ և մեծ համակրութեամբ էր վերաբերյում դէպի նրա կրած նեղութիւնները:

Արմենակը անդադար «ախ» էր քաշում իր խորտակուած սրտի մնացած բեկորներից... Անօթութիւնը կուած ամօթի քողը և հաց խնդրեց Արտապատրեց նրա ամօթի քողը և հաց խնդրեց Արտաշէսից:

Ո՛հ, որքան ծանր է հաց մուրալ նրան, ով մուրացկան չէ...»

Թռողնել ինքնակամ պապական տունը, հայրենի տեղը անսպաս հարստութեամբ, և ցանձն առնելնի արդար ու մի նեղութիւններ.—հւմ համար. մի օրինագար ու մի նեղութիւններ... Երիտասարդարդարդի և արդեօք նա էլ սիրելում է... Երիտասարդարդարդի կան ցնորդներ...

Ճանապարհորդները շուտով կանգ առան մի խոտաւէտ տեղ: Արտաշէսը իշնելով ձիուց՝ ցած բերեց տաւէտ տեղ: Արտաշէսը իշնելով ձիուց՝ ցած բերեց սաւէտ տեղ: Արտաշէսը իշնելով լուսութեան կանախուրջինը, և երկուսն էլ նստեցին բնութեան կանախուրջինը, և ապա այդպէս է, ես էլ ոտքով կը գամ ասեց Արտաշէսը, գնանք միասին ոտքով մինչև կալարանը, որ շատ հեռու չէ. այնտեղից սալակ կը վերցնենք, և կը շարունակենք մեր ճանապարհը:

Արտաշէսը, ձիու սանձից բռնած, առաջ էր գընում Արմենակի կողքին:

Տեսնելով որ հոգեկան տրամադրութիւնը փոքր ինչ խաղաղ է—դարձաւ դէպի Արմենակը.

—Ես, այնու ամենայնիւ, չիմացայ, թէ ինչ է պատճառը, որ թողի՞ր հայրենիքդ... ինչու ես գնում Պ. քաղաքը:

—Է՛հ, հոգոց հանեց Արմենակը. երբ մի տեղ լաւ չէ՝ միւս տեղ լաւ կը լինի:

—Ի՞նչ վատ բան կար հայրենիքումդ. զուցէ չքաւրութիւն:

—Ոչ, դարձեալ ախ քաշեց Արմենակը. Փոքր լընութիւնից յետոյ՝ աւելացրեց:

—Գնում եմ բաղդ որոնելու: զօր իսկ մասնաւին

—Եթէ այն հայրենիքումդ չդժար—դու մի սպա-

Ապա բոլորը տեղաւորելով փոքր ինչ հանգստացան, ընդհատելով առ ժամանակ իրանց քաղցր զրուցան,

ցագրութիւնը արքունական ճանապարհին սլացող եռածի սալակների գանգերի անկարգ զօղանչիւնը:

Ուղեկիցները պատրաստուեցան գնալու, երկուսն էլ դէպի Վ. քաղաքը: Արտաշէսը առաջարկեց Արմենակին նստել իր ձիու վրաց, տեսնելով նրա ցողնածութիւնը:

—Նստիր ձիու վրաց, ես ոտքով կը գամ:

—Ոչ երբէք, ձիուդ վրաց ինքդ նստիր, ես մի կերպ կը հետևեմ քեզ:

—Դու աւելի պէտք ունիս նստելու:

—Ճատ և շատ շնորհակալ եմ, բարի մարդ:

—Եթէ այդպէս է, ես էլ ոտքով կը գամ ասեց Արտաշէսը, գնանք միասին ոտքով մինչև կալարանը, որ շատ հեռու չէ. այնտեղից սալակ կը վերցնենք, և կը շարունակենք մեր ճանապարհը:

Արտաշէսը, ձիու սանձից բռնած, առաջ էր գընում Արմենակի կողքին:

Տեսնելով որ հոգեկան տրամադրութիւնը փոքր ինչ խաղաղ է—դարձաւ դէպի Արմենակը.

—Ես, այնու ամենայնիւ, չիմացայ, թէ ինչ է պատճառը, որ թողի՞ր հայրենիքդ... ինչու ես գնում Պ. քաղաքը:

—Է՛հ, հոգոց հանեց Արմենակը. երբ մի տեղ լաւ չէ՝ միւս տեղ լաւ կը լինի:

—Ի՞նչ վատ բան կար հայրենիքումդ. զուցէ չքաւրութիւն:

—Ոչ, դարձեալ ախ քաշեց Արմենակը. Փոքր լընութիւնից յետոյ՝ աւելացրեց:

—Գնում եմ բաղդ որոնելու: զօր իսկ մասնաւին

—Եթէ այն հայրենիքումդ չդժար—դու մի սպա-

սիր օտար երկրում:

— Ե՞ն, արտասուբքները խեղդեցին Արմենակին, Էլ չկարողացաւ շարունակել և ապա դառնալով դէպի բարեմիտ ուղեկիցը՝ ասեց:

— Խնդրեմ այդ բանի մասին թողնենք խօսակցութիւնը. եղածը վերջացած է:

Օռոտով հասան կայարան: Արտաշէսը հրամայեց մի սայակ լծել. իր ձին Էլ յետևից կապելով՝ երկուսն էլ տեղաւորուեցան մէջը և ուղին շարունակեցին:

Ճանապարհին եղած խօսակցութիւնը վերաբերում էր քաղաքի կեանքին և առհասարակ օտարութեան... Գիշերը վրայ հասաւ. ճանապարհին նրանք չուզենալով մթանը քաղաքը մտնել՝ գիշերեցին մտակայ կայարանում:

Եռաւօտ էր. Արեք նոր էր բարձրացել հորիզոնից, որ երկուսն էլ մտան Վ. բազմամարդ քաղաքը:

Ե.

ՀԱՐՈՒՆԾ ԵՒ ԲԱՆՏ

Քաղաք հասնելուն պէս, Պատուականեանը անմիջապէս գնաց իր բրդի ամբարները, իսկ Արմենակը այնքան նեղութիւններ կրելուց յետոյ, մնաց միայնակ օտար քաղաքում:

Նա մտամոլոր քայլում էր Վ. սիրուն քաղաքի կանոնաւոր փողոցներով, անձունի հագնուած: Երկար ժամանակ թափառում էր: Քաղաքի յեղձուցիչ օդը միախառնուելով գործարանական նաւթահոտի հետ՝ ճնշող տպաւորութիւն էին թողնում նրա վրայ: Յի-

շեց իր հայրենիքի գուարթարար օդը, նուիրական լեռներն, սիրուն դաշտերը, գեղեցիկ մարգագետիններ, և բովէապէս Էլ անյայտացան, մտաբերելով նրան, որի համար եկել էր: Ճատ անց ու դարձ արեց փողոցները, որոնելով հայկանուշին... Աննկատելի կերպով կանգ առաւ կւոնեանցի տան առաջ և մի անհաճոյ զգացմունք յետ մղեց նրան:

— Ի՞նչպէս երեամ այս անձունի հագուստով, ուր գնամ անփող, վերջապէս ինչ անեմ, մտածում էր նա, բայց ինչպէս չտեսնեմ այդ հրեշտակին:

Յուսաբէկ նա յետ դարձաւ և պատահելով մի ծանօթ մարդու, հարց ու փորձ արեց հայկանուշի մասին և իմացաւ թէ նա վաղուց արդէն ամուսնացել է երդուեալ հաւատարմատար Աւետիք Խւութեանի հետ և իր մարդու հետ ապրում է Մօսկվայում:

Հարուածը մեծ էր. լեզուն պապանձուեց, ոտները թուլացան, աչքերը մթնեցին, և հաւաչելով գետին ընկաւ: Փոքր ժամանակ այդ դրութեան մէջ մնալով վերկացաւ գոչելով. «անգութ հայկանուշ, քեզ համար զոհեցի թէ հարստութիւն, թէ պատիւ և թէ հայրենիք, իսկ դու ինձ դաւաճնեցիր... ով, եթէ ձեռքս ընկնես... կենդանի չես մնայ:»

Համր քայելով առաջ գնայ, թէ ուր, —ինքն էլ չէր իմանում:

Արեգակը արդէն կատարելու վրայ էր իր օրեկան շրջանը, հարուած կրող Արմենակը անցնում էր մի յայտնի փողոցով, մերթ գէս-դէն նայելով և մերթ կանգ առնելով ակամայ:

Փողոցի մէջ աղմուկ ընկաւ. բազմաթիւ մարդիկ շրջապատեցին նրան. երևացին նոյնպէս ոստիկաններ: Արմենակը ապշած էր, չէր հասկանում, թէ ի՞նչ են ուզում իրանից:

— Բոնեցէք, սա աւագակ է, սա է կողոպտել եղբօրս. թալանող աւագակներից մէկն էլ սա է. ահա հագին ունի նրա շորը, լսվում էր մի ձայն:

— Ես... աւագակ... Տ. գիւղ... Հայկ... վախվախելով աշխատում էր արդարանալ Արմենակը, — բայց իգուր: Ոստիկանները շուտով քարշ տուեցին նրան դէպի բանտ:

Ենտեղ ուշքի գալով՝ հասկացաւ, որ կալանաւորուած է: Հետևեալ օրը տարան ոստիկանապետի մօտ հարց ու փորձի, բայց նա նոյն անհեթեթ պատասխաններ տալով՝ նորից նստեցրին բանտը:

Ենցաւ երկու շաբաթ: Արմենակը գեռ բանտումն էր: Արտաշէս Պատուականնեանցը, սեփական գործի պատճառով ոստիկանատուն մտնելով՝ խմացաւ նրա ձերբակալուելը: Նրա երաշխաւորութեամբ շուտ հանուեցաւ բանտից. անմեղ ճանաչելով նրան:

Ա.

ԳՈՅՑԱԽԹԵԱՆ ԿՐԻՒ

Դառն էր Արմենակի վիճակը:

Բանտից չնայելով ազատուեցաւ, բայց մի գրօշ անգամ չունէր, որ հաց առնէր: Ի՞նչ անէր: Նա, — որ իր հայրենական տանը ամբարները լիք հաց էր թողել, այժմ, օտարութեան մէջ, ստիպուած է

մուրա լ: Անտանելի է մուրացկանութիւնը նրա համար, ով այդ արհեստը չունի: Ամօթը մի կողմից, իսկ միւս կողմից էլ չէր տեսնողը կասէր. «Ճեռքեր, ոտներ, աչքեր ունիս, ինքու էլ առողջ ես և ջահէլ:»

Տաղտկալի էր կեանքը հ այրենի քից դուրսը: Այնտեղ, ուր յապշտակութեամբ սպասում էր իր սիրոյ առարկան գտնել, նա էլ կորաւ: Արմենակը, համոդուելով որ հայկանուշը չի էլ մտածել իր վրայ հիասթափուեցաւ:

— Ինչով պարապեմ. արհեստ չունիմ, ուսում չունիմ. ի՞նչով հաց ուտեմ. ահա հարցեր, որ նրան զբացնում էին այժմ...:

Ակամաց յանձն առաւ բեռնակրութիւն Պատուականնեանի բրդի ամբարներում: Ծանր հակեր տանելով և բերելով՝ արեան քրտինքով աշխատում էր իր օրական պարէնը:

Իիրակի էր: Եցտ օրը ամենքի համար հանդստեան և աղօթքի ցանկալի ժամն է, բայց բերնակրի համար այդ ևս չկաց: Ծանր բեռան տակ ճնշուելով, Արմենակը գնում էր փողոցով. նրա աչքերի հայեցքը յանկարծ ուղղուեցաւ մի ցիկնդրաւոր մարդու վրայ, որը թեանցուկ արած գնում էր մի կնոջ հետ: Բեռան ծանրութիւնը և վրայ հասնող բարյական յուզմունքը կորցրին նրա հաւասարակշռութիւնը. Արմենակը վայր ընկաւ. բեռան տակ. պարանը քիչ էր մնում խեղդէր նրան, եթէ օգնութեան հասնող մարդիկ չագատէին: Արմենակը տեսած կնոջը ընդունել էր հայկանուշի տեղ, բայց սխալուել էր:

Յանկանալով իսպար մուացութեան տակ՝ իր մըտքումն ասեց. «անիծեալ կին, իմ անբաղդութիւնը

քո մեղքիցն է, դու գարար իմ հայրական տան
կործանման պատճառը... Բայց սխալում էր.

թ.

Վ Ե Բ Ա Դ Ե Բ Զ

Անցան տասն ձիգ և դառնալէտ տարիներ. Այդ
տարտկալի ժամանակում նա հալվում ու մաշվում էր
ծանր բեռների տակ. Վ. քաղաքի կեանքը փչացրել
էր նրան նաև բարոյապէս, վարակելով զանազան ան-
բուժելի ցաւերով:

Գիշեր էր: Երկար ժամանակ քունը չէր գալիս:
Նա սկսեց մտածել. «ինչու բաժանուեցի իմ հայրե-
նիքի սուրբ ծոցից, ինչու յանձն առայ այս տաժա-
նելի և մեռցնող կեանքը, թողնելով հայրական ժա-
ռանգութիւնս: Ինչու ըստեցի իմ հանգուցեալ հօր
սիրուն խօսքերը, ինչու հայրենական խաղաղ տունս
փոխարինեցի օտարների ճնշումների և անարգանք-
ների հետ. ուր է հայրական տան օջախի ծուխը:
Դատարկութեան յետեկից ընկնելով, ամեն բանս կոր-
ցրի: Պատիւս ոտնակոխ արի: Ոնոտի բաղդի յետեկից
ընկնելով, թողի ճշարիտ երջանկութիւնը: Հեռացայ
հայրենիքիցս...»

Քաղցր է հայրենի հողը, երբ նրա վրայ է, բայց
աւելի քաղցր է, երբ նրա կարօտն է քաշում հե-
ռուից օտարութեան մէջ հեծողը:

«Ի՞նչ տեսայ այս անհիւրնկալ աշխարհում, եթէ
ոչ վիշտ և տառապանք: Այժմ ես անձամբ ճաշակե-
ցի պանդխտութեան դառնութիւնները: Անշուշտ

պէտք է վերադառնամ ծննդավայրս և ընդ միշտ
մնամ այնտեղ. հայրենիքիս մի թիզ հողը պէտք է
գերադասեմ քաղաքի փառաւոր պալատներից և քա-
ռաձի կառքերից: Գնամ, քրտինքս թափեմ այն հո-
ղի մէջ, ուր մեր պապերն են ապրել, գնամ իմ վեր-
ջին շունչս դնեմ մեր տան շէմքում և քանի կեն-
դանի եմ յաւերժացնեմ իմ սիրելի հօր հոգին: Թող-
նեմ օտարութեան խամրիչ կեանքը և շուտով վերա-
դառնամ դէպի կորուսեալ դրախտը: Ցիմարութիւնս,
անմիտ ցնորքս ինձ անջատեց այն երկրից, ուր
կեանք եմ ստացել, ուր սնուել ու մեծացել եմ:»

Սրմենակը վճռեց անշուշտ վերադառնալ:

Օրերն ամիսներ էին թւում Արմենակին: Մի քա-
նի շաբաթ ևս թափառեց Վ. քաղաքում. նրա նպա-
տակն էր մի քանի կոպէկ ձեռք բերել ճանապար-
հածախսի համար: Ծանր և լարուած աշխատութիւն-
ներով նա կարողացաւ մի տասն րուբլի վաստակել:

Տ. գիւղից շատերն էին գտնվում պանդխտու-
թեան մէջ, Սրմենակը չորսին կարողացաւ համոզել,
որ իր հետ միասին վերադառնան հայրենիք:

Հինգ հայրենակից պանդխտներ երեկոյեան դի-
մեցին Վ. քաղաքի միակ հայոց եկեղեցին. չոքեցին
ալէգարդ քահանացի առաջ, որը օրհնելով նրանց
ճանապարհը՝ միսիթարեց աստուածահանոյ խօսքե-
րով:

Առաւօտ էր. գեռ արևածագը չբացուած վերա-
դարձող պանդխտները Սրմենակի առաջնորդու-
թեամբ իրանց ցանկալի հայրենիքի ճանապարհը բըռ-

նեցին: Վերջին անգամ հայացքներն ուղղելով դէպի
Վ. քաղաքի եկեղեցու երեացող գմբէթը՝ շարունա-
կեցին: Հայրենակից գիւղացիները գնում էին ֆուր-
գօնով: Ուրախութիւնը ընդհանուր էր. ֆուրգօնի
գանդաղ և ջախջախող գնացքը աննկատելի էր թլ-
ւում նրանց: Մեր ճանապարհորդները ցած եկան
ֆուրգօնից, ուզենալով փոքր ինչ ոտքով քայլել:

— Տղերք, ասաց Արմենակն իր ընկերներին, լաւ
նայեցէք, ահա այստեղ էր, որ կողոպտուած, անօթի
և չարչարուած դուրս եկաց և առաջին անգամ պա-
տահեցի Արտաշէս Պատուականեանցի պէս բարի
մարդուն:

— Դրա պէսները շատ հագուազիւտ են, կամացուկ
պատասխանեց մէկը, որ նոյնպէս շատ էր ճաշակել
պանդստութեան բաժակի դառնութիւնները:

Առանձին ախորժակով նոքա սկսեցին իրանց գլո-
խի եկածները պատմել միմեանց: Եյդ միջոցին ֆուր-
գօնը առանց նշարելու բաւական տարածութիւն
էր անցէլ. Ճանապարհը ցածրանում էր լեռների
պտոյտներով: Ուզեկիցներից մէկը, որ լաւ սովոր էր
այդ ճանապարհներին՝ ասեց.

— Ինձ հետ եկէք, շուտ կը հասնենք:

Ամենքը վագեցին նրա յետևից և կարճ կտրելով
շտապով հասան ֆուրգօնին: Նրանք նորից տեղառ-
րուեցան մէջը:

Անցաւ դարձեալ մի քանի օր: Արմենակը իր ըն-
կերներով մօտենում է հայրենի Տ. գիւղի սահման-
ներին: Հայրենիքի գեղագուարճ տեսարանները յա-
ջորդում էի մէկը միւսին: Ամենքի աչքերի մէջ երե-
ւացին արտասուքի սրբագան կաթիլներ: Արմենակը

պատկերացրեց իր պապական տունը և հայրենա-
կան պարտէզը: Բայց հուր է այժմ...:

«Միթէ ես չդառաց, մտածում էր Արմենակը, իմ
հօրս կորատեան խոկական պատճառը:»

Մինչդեռ սրան կրծում էր նոր զարթնող խղճի
խայթը, միւս ընկերները անդադար ծափ տալով, ու-
րախութեան երգեր էին հնչեցնում: Արմենակը վայր-
կենական մոռացութեան տուեց իր կսկիծը և միա-
խառնուեցաւ նրա անմեղ գուարճութիւնը:

Տ. գիւղը ամբողջապէս այժմ նրանց աչքերի ա-
ռաջն էր փուռած: Ամենքը ցած եկան և իրանց իրե-
րը վերցնելով դիմեցին տները:

Արմենակն էլ վերցնելով ճանապարհորդական շո-
րերը, արկդ դիմեց իր հայրենի տնակը, բայց ինչ—
անշունչ բեկորներ...

Այն տունը, ուր տասն տարի առաջ կեանքը եռում
էր իր բոլոր գոյներով, այժմ աւերակների մի կոյտ
էր դառել. իսկ կալուածները՝ ընդարձակ վարելահո-
ղերը, զեղածիծաղ պարտէզն ու կանաչափայլ ազգի-
ներն անցել էին անկուշա Գէլ-Սարգսի ձեռքը, իբրև
նրա սեփականութիւն...

Արմենակը նստեց հայրական տան կիսափուլ բե-
կորի վրայ և երկար ժամանակ ողբաց իր վիճակը.
ողբաց իր անհեռատեսութիւնը, ողբաց ամբողջ ան-
ցեալը:

Աննկատելի կերպով վերկացաւ և դիմեց դէպի
իրանց գիւղական անպացոյն հանգստարանը: Մնկա-
չոք ընկնելով հօր գերեզմանի հողակոյտի վրայ՝ եր-
կար, շատ երկար լալիս էր և ջերմագին համբոցըներ
էր դրօշմում ցուրտ հողի վրայ: «Մեղաւոր եմ քո

առաջ՝ խօսքերը դուրս թռան թէ չէ նրա բերանից, արտասուրքի կաթիները նորից խեղդեցին և ընկաւ անզգայութեան մէջ...:

Այդ միջոցին Արմենակին ծատեցաւ մի ծերունի ալէջան մազերով, ժպտադէմ, համբուրեց նրան և ասաց.

— Որդի, ուրախ եմ, որ վերջապէս վերադարձար հայրենիքդ. դու զգացիր սխալդ և եկար հայրենի գիրկը, իմ հոգին հանգիստ չէր. Փառք Արարչին, որ արժանացայ դարձեալ տեսնել քեզ: Այժմ ես խաղաղ կը ննջեմ իմ յաւիտենական օթևանում:

— Ներիր մեղքերս, հայր:

— Այժմ ես անզրդով կը խնդրեմ Աստուծուն, որ թողութիւն տայ, իսկ դու երդուիր մինչև որ շունչդ բերանումդ է—չդնաս հայրենիքից դուրս...

Ծերունին—հօր ուրաւականն էր:

Արմենակը անզգայութիւնից ուշքի գալով՝ հօրը չտեսաւ, այլ դրա փոխանակ երևաց սև հողակոյտը... Դարձեալ համբոյներ դրոշմեց և տխուր քայլերով հեռացաւ անշուրք գերեզմանոցից:

Փ.

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Անցաւ մի քանի տարի:

Արմենակը, վերադարնալուց յետոյ, բարի մարդկանց օգնութեամբ հայրենի բնակավայրը հիմնովին նորոգեց. նախկին պարզ տան փոխանակ՝ շինեց մի գեղեցիկ շինութիւն: Նա ամուսնացաւ իրանց հարե-

ւանի աղջկայ՝ Սօնայի հետ: Նրա գուարթ մանուկները խայտալով խաղում են նոր ծաղկեցրած նորապարտիզում: Վարելահողեր ձեռք բերեց և նոր այդիներ տնկեց:

Երկար ժամանակ Արմենակը թափառում էր դադաստաններում, որ իր հայրենական կալուծներն ևս ձեռք բերի: Գնաց Ա. քաղաքը և պ. Գրիգոր Պապեանց բարեխիղճ փաստաբանի օգնութեամբ դատը տարաւ գիշատիչ Գէլ-Սարգսից:


Ուրախ էր Արմենակը. ամբարները լիքն էին հացով, մասունը գինով. չորս գութան լծկան եզներ ունէր. կովերի և ոչխարների թիւը անհամար էր: Որդիքը գիւղական դպրոցումն էին սովորում: Բաղդասոր էր նրա կեանքը: Արմենակը երդուեց հօր շիրմի վրայ, երբէք ոտը չհանել հայրենիքից գուրս, ուր միայն թշուառութիւն է գտնվում: Տիսուր անցեալը մոռացութեան տուեց և զբաղուեց ներկայով իր ծննդավայրում: Նրա հանգուցեալ ծընողների հոգին ուրախացան. անհուն բերկութեամբ ուրախացան նոյնպէս նրա հայրենակիցների սրտերը. ուրախ չէր միայն Գէլ-Սարգիսը, որի ներսը բոյն էին դրել սև նախանձն ու չկամութիւնը: Բայց նա արդէն դժոխքի բաժին էր հենց երկրաւոր աշխարհում...:

Արմենակը հասաւ խորին ծերութեան. նրա սովորական խօսքն էր միշտ. «Հայրենիքից դուրս վիշտ է և ցաւ:»

ՎԵՐՋ

քանին ելլուսոր այս՝ ուժը պատճեն շատեցան զման
աղոթ՝ Տաղածինաց կոմ մ՛մ հերոսի խրառությունից զօդեց
ու կոմ և զգեցի ու ուն դժբահանութ և արդիուսոր
շար դժ և անսպասի ովանձնութ խանունի զայիմ
մրմիւննորդ մարտնչանք, ոյն որ հետզեւնուուր
զարթզը քը և զարդար մ զամք ուղեցի զոնք ու ու
շառութիւնը ովանձնութ ձրիսիւսոյ զններութ

այս այս մեջ զգմիւնաց զբանեանուն ու պայման
զմիւն մարթն մասն այս այս գրանք գրաւան իւր
զայ զանունուն զոնք այս պատճենութ մ մրմիւն ու մատ
րամ մատզարու մին մի անուղուր շանչար մի զայ գրի
ու զայ ամ այս շինուն զոնք գրար զայ զոնք մեջ
մարթն մ մայն մասնութիւն մշատի զոնք ու զայ որ
պարզուց մ զոնք մասնեանցաւն զանձնուն զոնք
ու զայ բարձրութ այս մատզախարմն ով խոշիրուն
զանձնուն զանձնայիւնութ այս սիրուն մաշատիւն
մաս զոնք զոնք զայ րուս-իմ մշատի զայ մասնութ
ու զոնք ու զայ մի տարբ ու մասնաւուն մի բար մի ու
զոնք զանձնութ զանձնութ ով զայ զոնք ու զայ



6118
6119
6120 6121
24571
24572

2018

